բական, մարդասիրական ու քրիստոնեական գաղափարներով: Դրն Մարթենսը նաեւ անդրադարձավ այն համագործակցությանը, որ Եւրոպական ժողովրդական կուսակցությունն ունի մի շարք քրիստոնեական Եկեղեցիների հետ՝ վստահություն հայտնելով, որ այս հանդիպումը սկիզբ կդնի կուսակցության մի նոր համագործակցության նաեւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետ:

Զրույցի ընթացքին խոսվեց նաեւ հայ-թուրքական հարաբերությունների եւ տարածաշրջանային այլ հարցերի մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷՄԻՐ ԿՈՒՍՏՈՒՐԻՑԱՅԻՆ

Մարտի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սերբ նշանավոր կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցային՝ ուղեկցությամբ տիկին Կուստուրիցայի եւ ռոք նվագախմբի երաժիշտների:

Ողջունելով նշանավոր արվեստագետի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցին եւ նրա կարեւոր դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում, ազգային-հոգեւոր արժեքների եւ ազգային ինքնության պահպանության գործում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Եկեղեցու ազգային դիմագծին եւ այն հսկայական ներդրմանը, որ Հայ Եկեղեցին ունեցել է հայկական մշակույթի կերտման եւ զարգացման գործում:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը վերհիշեց իր հանդիպումը հայտնի կինոռեժիսորի հետ այս տարվա հունվարին Մոսկվայում, երբ Նորին Սրբությանը եւ Է. Կուստուրիցային Ուղղափառ ժողովուրդների միաբանության միջազգային հիմնադրամի կողմից հանձնվեց Ալեքսի Բ պատրիարքի անվան 2009 թ. մրցանակ՝ հասարակության կյանքում հոգեւոր արժեքների հաստատման եւ ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Իր խոսքում նշանավոր ռեժիսորը նշեց, որ իր համար հաճելի է լինել Հայաստանում եւ ծանոթանալ մի ժողովրդի հետ, որն իր կրած տառապանքներով նման է սերբ ժողովրդին: Է. Կուստուրիցան անդրադարձավ նաեւ հոգեւոր արժեքների կարեւորությանը՝ շեշտելով, որ հոգեւոր մեծ ներուժ է տեսնում Հայաստանում: Այնուհետեւ ռեժիսորը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց իր առաջիկա անելիքները:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Վեհարանի թանգարան, ծանոթացան հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գիմոռեժիսոր Էմիր Կուստուրիցան Վենետիկում